
Սրճեփ MINI 2.0, մոդել՝ 3A-C276F

ՕԳՏԱԳՈՐԾՈՂԻ ՁԵՌՆԱՐԿ




Կառուցվածք



Նկ. 1. Սարքի բաղադրիչները

1	Լծակ	7	Կառավարման վահանակ
2	Պարկուճի պահոց	8	Ջրի բաքի կափարիչ
3	Ծորակ	9	Ջրի բաք
4	Օգտագործված պարկուճների տարա	10	Կողային վահանակ
5	Բաժակների համար ընդկալ	11	Ներքին ընդկալ կաթիլներ հավաքելու համար
6	Ընդկալ կաթիլներ հավաքելու համար		



Նկ. 2. Կառավարման վահանակ

A	Էսպրեսո պատրաստելու կոճակ	C	Տաք ջրի մատակարարման կոճակ
B	Լունգո պատրաստելու կոճակ	D	Միացման կոճակ

Բովանդակություն

Կառուցվածք 2
Կարևոր է Նախազգուշական միջոցներ 5
Շահագործման հրահանգներ 7
Օգտագործողի անվտանգությունը՝ Բացում և տեղադրում 8
Ինչպես օգտագործել սուրճի մեքենան 10
Նորմատիվ ակտեր 10
Շահագործում 11
Սուրճի պատրաստում 12
Նստվածքի հեռացում 16
Մաքրում 16
Անսարքությունների որոնում և վերացում 17
Ապամոնտաժում 18
Լրացուցիչ նախազգուշացումներ 19
Տեխնիկական բնութագրեր 20
Սպասարկման ծառայություն 20

Կարևոր է Նախազգուշական միջոցներ

Ուշադիր կարդացե՛ք այս հրահանգները, նախքան ձեր նոր սուրճի մեքենան առաջին անգամ օգտագործելը: Պահպանեք հրահանգները, որպեսզի անհրաժեշտության դեպքում հետագայում կարողանաք դրանց դիմել:

- Արտակարգ իրավիճակի դեպքում անմիջապես հանեք խրոցը վարդակից:
- Թույլ մի տվեք երեխաներին օգտագործել սարքը առանց մեծահասակի անմիջական հսկողության:
- Ստուգեք, որ տեխնիկական բնութագրերի վրա նշված լարումը համապատասխանում է ձեր էլեկտրական ցանցի լարմանը:
- Սարքը միացրեք միայն հողակցված վարդակին:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Սխալ միացումն անվավեր է դարձնում երաշխիքը:

- Ձեր սարքը նախատեսված է միայն փակ տարածքում օգտագործման համար:
- Հանե՛ք խրոցը վարդակից, եթե տևական ժամանակ չեք օգտագործելու սարքը /օրինակ՝ արձակուրդի ժամանակ/:
- Մաքրելուց և տեխնիկական սպասարկումից առաջ անջատե՛ք սարքը վարդակից և թողեք, որ այն սառչի:
- Արգելվում է սուրճի մեքենան, սնուցման լարը կամ խրոցն ընկղմել ջրի կամ որևէ այլ հեղուկի մեջ:
- Սնուցման լարը պահեք երեխաների համար անհասանելի վայրում:
- Երբեք մի թողեք սնուցման լարը մեքենայի տաք մասերի, ջերմության աղբյուրների կամ սուր եզրերի կողքին և մի թույլ տվեք դրանց շփումը:
- Երբեք սարքը մի դրեք տաք մակերեսի վրա, օրինակ՝ տաքացնող վառարանի վրա: Մի օգտագործեք սարքը բաց կրակի անմիջական մոտակայքում:
- Սարքը տեղադրեք հարթ, կայուն և ջերմակայուն մակերեսի վրա՝ հեռու այն վայրերից, որտեղ ջուրը կարող է ցայտել:
- Վնասված սնուցման լարը պետք է փոխարինվի միայն արտադրողի, նրա սպասարկման գործակալի կամ նմանատիպ որակավորում ունեցող մասնագետի կողմից՝ անորակ սնուցման լարերի օգտագործման հետ կապված վտանգներից խուսափելու համար:

Այս սարքը կարող են օգտագործել 8 տարեկան և բարձր երեխաները, եթե նրանք գտնվում են հսկողության տակ կամ ստացել են սարքի անվտանգ օգտագործման վերաբերյալ հրահանգները և գիտակցում են դրա հետ առնչվող ռիսկերը: Մաքրումը և տեխնիկական սպասարկումը չպետք է կատարեն երեխաները, բացառությամբ այն դեպքերի, երբ նրանք 8 տարեկանից բարձր են և գտնվում են հսկողության տակ: Սարքը և էլեկտրական լարը պահեք 8 տարեկանից փոքր երեխաների հասանելիությունից դուրս:

Սարքավորումները կարող են օգտագործվել ֆիզիկական, զգայական կամ մտավոր կարողությունների սահմանափակմամբ, կամ փորձի և գիտելիքների պակաս ունեցող անձանց կողմից միայն այն դեպքում, եթե նրանք գտնվում են հսկողության տակ կամ հրահանգված են սարքի անվտանգ օգտագործման վերաբերյալ և գիտակցում են դրա հետ առնչվող ռիսկերը:

Թույլ մի՛ տվեք երեխաներին խաղալ սարքի հետ:

Այս սարքը նախատեսված է կենցաղային և դրանց հավասարեցված պայմաններում օգտագործելու համար, ինչպիսիք են՝

- Խոհանոցային տարածքներ աշխատակիցների համար խանութներում, գրասենյակներում և այլ աշխատանքային տարածքներում.
- Մասնավոր տներ.
- Հաճախորդների համար նախատեսված տարածքներ հյուրանոցներում, մոթելներում և այլ հյուրատներում.
- Մինի-հյուրանոցներ

Արգելվում է շահագործել սրճեփը պահարանների ներսում:
Մաքրումը և տեխնիկական սպասարկումը չպետք է կատարվի երեխաների կողմից առանց հսկողության:

Շահագործման հրահանգներ



Ուշադիր կարդացեք այս հրահանգը, քանի որ այն պարունակում է կարևոր տեղեկություններ սարքի անվտանգության, շահագործման և տեխնիկական սպասարկման մասին: Պահպանեք այս հրահանգն անհրաժեշտության դեպքում դրան դիմելու համար:

- Օգտագործելուց առաջ համոզվեք, որ սուրճի մեքենայի մեխանիկական և այլ մասերը սարքին են: Սուրճի մեքենայի կորպուսը, ջրի բաքի կափարիչը, բաքն ինքը և եփման սարքը չպետք է ունենան որևէ վնասվածք կամ ճաքեր: Հոսանքի լարի պատյանը և խրոցը չպետք է ունենան որևէ ճաքեր կամ վնասվածություն: Եթե որևէ անսարքություն հայտնաբերվի, անմիջապես անջատեք սարքը վարդակից և տարեք այն լիազորված դիլերի մոտ՝ ստուգման համար:
- Խորհուրդ է տրվում սարքը միացնել 30 մԱ-ից ոչ ավելի անջատման հոսանք ունեցող պաշտպանիչ անջատման սարքի /ՊԱՍ/ միջոցով:
- Սնուցման լարը պահեք երեխաների համար անհասանելի վայրում:
- Համոզվեք, որ սուրճի մեքենան անջատված է, նախքան այն էլեկտրական վարդակին միացնելը:
- Այս մեքենայի էլեկտրական անվտանգությունն ապահովվում է միայն այն դեպքում, եթե այն միացված է հուսալի հողանցման համակարգին՝ համաձայն գործող անվտանգության կանոնակարգերի: Հանձնարարեք այս կարևոր պահանջի ստուգումը որակավորված մասնագետին: Արտադրողը պատասխանատվություն չի կրում հողանցման բացակայության պատճառով առաջացած վնասի համար:
- Սուրճի մեքենան էլեկտրական ցանցին միացնելուց առաջ համոզվեք, որ սնուցման պարամետրերը համապատասխանում են մեքենայի տեխնիկական բնութագրերին:

- Մի օգտագործեք վերգետնյա էլեկտրական մալուխներ կամ չհաստատված երկարացման լարեր սուրճի մեքենային էլեկտրաէներգիա մատակարարելու համար:
- Սուրճի մեքենան օգտագործելուց առաջ հեռացրեք բոլոր պաշտպանիչ թաղանթները դրա կորպուսի արտաքին պատերից:
- Սուրճի մեքենան առաջին անգամ օգտագործելիս կարող է հոտ առաջանալ ջերմամեկուսիչ նյութերի և տաքացնող տարրերի պատճառով: Այս հոտը մի քանի րոպեից կանհետանա:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Մի թողեք սուրճի մեքենան առանց ջրի բաքի մեջ:

- Արգելվում է սուրճի մեքենան, սնուցման լարը կամ խրոցն ընկղմել ջրի կամ որևէ այլ հեղուկի մեջ: Պահեք հոսանքի լարը սուրճի մեքենայի տաքացող մասերից հեռու:
- Սարքի շահագործման ընթացքում էլեկտրական լարի խրոցի նկատմամբ մուտքը պետք է ազատ մնա, եթե անհրաժեշտ լինի անջատել սարքավորումը:
- Մի՛ անջատեք սուրճի մեքենան՝ քաշելով հոսանքի լարը: Մի՛ տեղաշարժեք սուրճի մեքենան, երբ այն աշխատում է:
- Մի՛ թողեք աշխատող սուրճի մեքենան առանց հսկողության, քանի որ այն ավտոմատ անջատման գործառույթ չունի:
- Մի՛ օգտագործեք և մի՛ տեղադրեք սուրճի մեքենան դրսում կամ ջրի մոտ: Պարտադիր անջատե՛ք սուրճի մեքենան հոսանքից ամեն օգտագործումից հետո:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Մի թողեք մեքենան 0°C կամ ավելի ցածր ջերմաստիճան ունեցող տարածքներում: Եթե չեք պատրաստվում սուրճի մեքենան օգտագործել բավականին երկար ժամանակ, ջուրը թափեք բաքից:

- Այս մեքենան ոչ մի դեպքում չպետք է օգտագործեն երեխաները, սահմանափակ կարողություններ ունեցող անձինք կամ նմանատիպ անձինք՝ առանց նրանց անվտանգության համար պատասխանատու անձի հսկողության, ինչպես նաև այն անձինք, ովքեր պատշաճ կերպով չեն անցել շահագործման կանոնների և սխալ օգտագործման հետ կապված ռիսկերի գծով հրահանգավորում:
- Մի օգտագործեք սուրճի մեքենան ոտաբոբիկ կամ թաց ձեռքերով:
- Մաքրելուց կամ սուրճի մեքենայի վրա որևէ աշխատանք կատարելուց առաջ պարտադիր անջատեք սուրճի մեքենան հոսանքից:

Օգտագործողի անվտանգությունը՝ Բացում և տեղադրում

- Հանեք սուրճի մեքենան փաթեթավորումից և ստուգեք, որ բոլոր մասերը

առկա են և ամբողջական են:

- Տեղադրե՛ք սուրճի մեքենան հարթ, հավասար, կայուն և ջերմակայուն մակերեսի վրա, որը կարող է դիմանալ դրա քաշին:
- Մի՛ տեղադրեք կամ մի՛ օգտագործեք սուրճի մեքենան վարագույրների կամ այլ դյուրավառ նյութերի մոտ, և մի՛ դրեք որևէ առարկա դրա վրա, երբ այն աշխատում է:
- Մի՛ տեղադրեք սուրճի մեքենան ջեռոցի կամ այլ ջերմություն արտադրող սարքավորումների վրա կամ դրանց անմիջապես մոտակայքում /օրինակ՝ ռադիատորներ և այլն/:
- Համոզվեք, որ սուրճի մեքենայի շուրջը բավարար տարածք կա պատշաճ օդափոխության համար:

⚠ Փաթեթավորման նյութերը /ստվարաթուղթ, ցելոֆան, մետաղական կեռիկներ և այլն/ կարող են կտրվածքներ կամ վնասվածքներ առաջացնել անզգույշ կամ սխալ օգտագործման դեպքում. պահեք դրանք երեխաների և հատուկ հմտություններ չունեցող անձանց հասանելիությունից դուրս:

Ինչպես օգտագործել սուրճի մեքենան

- Այս սուրճի մեքենան նախատեսված է բացառապես կենցաղում էսպրեսո պատրաստելու համար: Արգելվում է սուրճի մեքենան օգտագործել որևէ այլ նպատակով կամ որևէ փոփոխություն կատարել դրա կառուցվածքի մեջ: Ցանկացած այլ նպատակներով օգտագործումը համարվում է անպատշաճ և, հետևաբար, վտանգավոր: Արտադրողը պատասխանատվություն չի կրում անպատշաճ, սխալ կամ անհիմն օգտագործման հետևանքով առաջացած որևէ վնասի համար:
- Սուրճի մեքենան օգտագործելիս մի դիպչեք տաք մասերին /սուրճ մատակարարող ծորակին/: Սուրճ պատրաստելիս զգույշ եղեք տաք ըմպելիքի հնարավոր ցայտերից:
- Սուրճ եփելիս մի՛ բացեք գլխավոր լծակը:


Նորմատիվ ակտեր

Արտադրողը հայտարարում է, որ այս թերթիկում նշված արտադրանքը արտադրվել է Եվրոպական համայնքի համապատասխան դիրեկտիվներին համապատասխան, ինչպես նշված է այս բուկլետին կից համապատասխանության հայտարարագրում:

Շահագործում

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Համոզվեք, որ բոլոր պարագաները տեղում են, իսկ սարքը վնասված չէ: Հեռացրեք սուրճի մեքենայի բոլոր պաշտպանիչ պիտակները և մաքրեք ներքին մասերը:


Սուրճի մեքենայի նախապատրաստում
Տեղադրեք սուրճի մեքենան հարթ և կայուն մակերեսի վրա: Համոզվեք, որ օգտագործված պարկուճների համար նախատեսված տարան, կաթիլներ հավաքելու համար ընդկալը և ջրի բաքը ճիշտ են տեղադրված:



Հանեք ջրի բաքը և լցրեք այն ջրով /մոտավորապես 470 մլ/:




Ջրի բաքը ճիշտ տեղադրեք հետ՝ մեքենայի մեջ:




Տեղադրեք բաժակը կաթիլների հավաքելու համար նախատեսված ընդկալի վրա: Հանե՛ք խրոցով սնուցման լարն ու տեղադրեք խրոցը վարդակի մեջ:


Առաջին գործարկում կամ գործարկում երկար ժամանակ չօգտագործելուց հետո
Կատարե՛ք (1), (2) և (3) քայլերը՝ սուրճի մեքենան նախապատրաստելու համար: Համոզվեք, որ լծակն իջեցված է, և սուրճի մեքենայի մեջ պարկուճ չկա:



Սարքը միացնելու համար սեղմեք միացման/անջատման կոճակը կամ որևէ այլ կոճակ:




Էսպրեսո, լունգո և տաք ջրի կոճակները միաժամանակ սկսում են թարթել նարնջագույնով: Երբ ցուցիչները դառնում են անփոփոխ նարնջագույն, նախնական տաքացումն ավարտված է:




Սեղմեք էսպրեսոյի, լունգոյի պատրաստման կամ տաք ջրի մատակարարման կոճակը, և ջուրը կսկսի հոսել ծորակից: Մատակարարումը կդադարի ավտոմատ կերպով:

Սուրճի պատրաստում


Նախ կատարեք (1), (2) և (3) քայլերը մեքենան նախապատրաստելու համար, ինչպես նաև՝ (4a) և (4b) քայլերը՝ այն միացնելու համար



Բացե՛ք լծակը և տեղադրե՛ք պարկուճը պարկուճների համար նախատեսված խցիկում:




Փակեք լծակը:



Սեղմեք էսպրեսսոյի կամ լունգոյի պատրաստման կոճակը՝ և սուրճը կսկսի հոսել ծորակից: Մատակարարումը կդադարի ավտոմատ կերպով:

Ջրի տաքացում




Երբ մեքենան պատրաստ կլինի օգտագործմանը, սեղմե՛ք տաք ջրի կոճակը:
Ջուրը կսկսի հոսել բաժակի մեջ, ապա հոսքը ինքնաբերաբար կդադարի: Գործընթացը կարելի է դադարեցնել կամ ընդհատել՝ սեղմելով պատրաստման կոճակներից որևէ մեկը:


Սպասման ռեժիմ
Եթե սարքը չօգտագործվի 9 րոպեից ավելի, այն ավտոմատ կերպով կանջատվի /բոլոր կոճակների լույսերը կմարեն/՝ էներգիա խնայելու համար:

Գործարանային կարգավորումների վերականգնում

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Էսպրեսո սուրճի լռելյայն ծավալը մոտավորապես 40 մլ է, իսկ լունգո սուրճի լռելյայն ծավալը՝ մոտավորապես
110 մլ: Տաք ջրի լռելյայն ծավալը կազմում է մոտավորապես 120 մլ:



Սեղմե՛ք և պահե՛ք «Էսպրեսո» և «Լունգո» կոճակները ավելի քան 3 վայրկյան:




Սուրճի պատրաստման կոճակները թարթում են 3 անգամ, ինչը նշանակում է, որ սուրճի մեքենան վերագործարկվել է գործարանային կարգավորումներին:


Չափաբաժինների ծավալի կարգավորում

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Համոզվե՛ք, որ ջրի բաքը լիքն է, երբ ընտրում եք չափաբաժինների ծավալը: Դուք կարող եք սահմանել ծավալը տարբեր ըմպելիքների համար հետևյալ սահմաններում.


Ըմպելիք	Ծավալի դիապազոն
էսպրեսո	10–140 մլ
լունգո	10 – 280 մլ
տաք ջուր	20 – 450 մլ



Սեղմե՛ք և պահե՛ք էսպրեսոյի, լունգոյի պատրաստման կամ տաք ջրի մատակարարման կոճակը 3 վայրկյանից ավել:




Ընտրված կոճակը թարթում է, և սուրճը կամ տաք ջուրը սկսում են հոսել ծորակից:




Երբ ծավալը կհասնի ցանկալի արժեքին, կրկին սեղմե՛ք ընտրված կոճակը: Ծավալը սահմանված է:


Անջատե՛ք մեքենան



Սեղմեք միացման կոճակը՝ մեքենան անջատելու համար:



Պատրաստելուց հետո բացեք լծակը: Օգտագործված պարկուճը կընկնի օգտագործված պարկուճների տարայի մեջ:



Հանեք օգտագործված պարկուճների տարան և դատարկեք այն 8-10 պատրաստման ցիկլերից հետո:

Նստվածքի հեռացում

Խորհուրդ է տրվում սարքը մաքրել նստվածքից մոտավորապես յուրաքանչյուր 6 ամիսը մեկ՝ կախված օգտագործման հաճախականությունից և ջրի կարծրությունից:


Հեռացրեք նստվածքը՝ սուրճի մեքենաների համար խորհուրդ տրվող հատուկ միջոցների օգնությամբ, կամ օգտագործեք ջուր և քացախ հետևյալ կերպ.


- Լցրեք ջրի բաքը չնոսրացված քացախով /5% լուծույթով/:
- Միացրեք սարքը և սեղմեք «լունգո» կոճակը՝ առանց պարկուճը տեղադրելու, սպասեք, մինչև բաքը դատարկվի:
- Լվացեք ջրի բաքը, սեղմեք լունգո պատրաստման կոճակը /առանց պարկուճը տեղադրելու/ և սպասեք, մինչև բաքը լիովին դատարկվի, այնուհետև մեկ անգամ ևս կրկնեք այս ընթացակարգը: Այս պահին քացախի հոտը պետք է ամբողջությամբ անհետանա:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Այս ընթացակարգը կարող է վտանգավոր լինել, եթե քացախի կամ կենցաղային սրճեփների համար խորհուրդ տրվող հաստատված նստվածքի հեռացման միջոցների փոխարեն օգտագործվեն այլ նյութեր:

Մաքրում

❶ Սարքի կորպուսը մաքրելու համար օգտագործեք խոնավ շոր և մի օգտագործեք հղկող լվացող միջոցներ:





Հանե՛ք օգտագործված պարկուճների համար տարան և կաթիլներ հավաքելու համար ընդկալը, իսկ այնուհետև դատարկեք դրանք: Լվացեք դրանք սովորական սպասք լվանալու համար նախատեսված միջոցով:

Պարբերաբար հանե՛ք ջրի բաքը և լվացեք այն մաքուր ջրով:

Անսարքությունների որոնում և վերացում

Եթե սարքը սխալ է աշխատում, խնդրում ենք կատարել ստորև նկարագրված պարզ ստուգումները: Եթե առաջացած խնդիրը նշված չէ ցանկում կամ պահպանվում է անգամ բերված խորհուրդների կատարումից հետո, դիմե՛ք պաշտոնական դիլերին:

Խնդիր	Հնարավոր պատճառ	Հնարավոր լուծում
Մեքենան չի միանում:	Սարքը ճիշտ չի միացված էլեկտրական վարդակին:	Համոզվեք, որ սարքը ճիշտ է միացված էլեկտրամատակարարմանը:
Սուրճը չափազանց սառն է:	Մեքենան պատրաստ չէ:	Սպասեք մինչև ցանկալի ջերմաստիճանին հասնելուն, ինչպես կնշի լուսային ցուցիչը:
Սուրճը չի մատուցվում կամ մատուցվում է չափազանց դանդաղ:	Ջրի բաքում բավարար քանակությամբ ջուր չկա:	Համոզվեք, որ բաքում ջրի մակարդակը համապատասխանում է նորմային և անհրաժեշտության դեպքում ավելացրեք սառը ջուր:

Ապամոնտաժում

- Սարքավորումների շահագործումից դուրս բերումը պետք է իրականացվի լիազորված անձնակազմի կողմից: Ջրային շղթան պետք է լիովին ապաճնշումային լինի, հոսանքի լարը պետք է անջատվի, իսկ շրջակա միջավայրի համար պոտենցիալ վտանգավոր բոլոր նյութերը պետք է պատշաճ կերպով և օրենքին համապատասխան օգտահանվեն:
- Մեքենան պահեք երեխաների կամ ոչ որակավորված անձանց հասանելիությունից դուրս:
- Եթե մեքենան ենթակա է օգտահանման, այն պետք է տարվի էլեկտրական և էլեկտրոնային սարքավորումների վերամշակման համար լիազորված հավաքման կետ (*): Սա արվում է շրջակա միջավայրը և մարդկանց հնարավոր վնասներից պաշտպանելու համար: Թափոնների վերամշակման վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար խնդրում ենք դիմել համապատասխան մունիցիպալ մարմիններին, կենցաղային թափոնների հեռացման ծառայությանը կամ վաճառողին:
- Թույլ մի տվեք, որ նյութը ներթափանցի շրջակա միջավայր:



Մեքենայի վրա փակցված նշումը՝ այն նույնականացնելու համար՝ համաձայն էլեկտրական և էլեկտրոնային սարքավորումների թափոնների վերաբերյալ WEEE հրահանգի /2002/96/EC/՝ եվրոպական շուկայի համար նախատեսված արտադրանքի դեպքում:

Լրացուցիչ նախազգուշացումներ

- Եթե սուրճի մեքենայի խրոցը չի համապատասխանում վարդակին, դիմեք որակավորված տեխնիկի, ով պետք է նաև համոզվի, որ սնուցման լարի լարերի հատվածքը համապատասխանում է մեքենայի կողմից սպառվող էներգիային: Խորհուրդ չի տրվում օգտագործել ադապտերներ, բաժանիչներ և/կամ երկարացման լարեր: Եթե անհրաժեշտ է դրանք օգտագործել, ապա պետք է կիրառվեն միայն ադապտերները /մեկ կամ մի քանի վարդակների համար/ և երկարացման լարերը, որոնք համապատասխանում են ներկայիս անվտանգության ստանդարտներին, ինչպես նաև չպետք է գերազանցել թույլատրելի բեռնվածությունը:
- Էլեկտրական սարքավորումներ օգտագործելիս պետք է պահպանել հիմնական կանոնները: Մասնավորապես՝
  մի՛ դիպչեք կամ մի՛ օգտագործեք սարքավորումը թաց կամ խոնավ ձեռքերով կամ ոտաբոբիկ.
  - մի՛ քաշեք հոսանքի լարը կամ սարքավորումը՝ այն ցանցից անջատելու համար.
  - թույլ մի՛ տվեք երեխաներին կամ անհրաժեշտ հմտություններ չունեցող անձանց օգտագործել սարքավորումները առանց հսկողության:
- Եթե մեքենան ջարդված է կամ ճիշտ չի աշխատում, անջատե՛ք այն և մի՛ փորձեք այն ինքներդ վերանորոգել: Եթե անհրաժեշտ է վերանորոգում, դիմե՛ք միայն պաշտոնական դիլերին: Վերոնշյալ պահանջներին չհամապատասխանելը կարող է ազդել մեքենայի անվտանգության վրա:
- Եթե որոշեք այլևս չօգտագործել մեքենան, պետք է այն դուրս բերեք շահագործումից՝ վարդակից անջատելով խրոցը, ապա կտրելով սնուցման լարը: Խորհուրդ է տրվում նաև վնասազերծել սարքի այն մասերը, որոնք կարող են վտանգ ներկայացնել, հատկապես երեխաների համար, ովքեր կարող են սկսել խաղալ չօգտագործվող սարքի հետ:
- Տեղադրումը պետք է կատարվի արտադրողի հրահանգներին համապատասխան: Սխալ մոնտաժումը կարող է վնաս հասցնել մարդկանց, կենդանիներին կամ գույքին, արտադրողը պատասխանատվություն չի կրում դրա համար:
- Վտանգավոր գերտաքացումից խուսափելու համար խորհուրդ է տրվում ամբողջությամբ բացել սնուցման լարը և օգտագործել սարքը խստորեն «Օգտագործման հրահանգներ» բաժնում բերված հրահանգներին համապատասխան:
- Եթե մեքենայի սնուցման լարը վնասված է, այն պետք է փոխարինվի միայն լիազորված դիլերի կողմից:
- Արտադրողը պատասխանատվություն չի կրում մարդկանց, կենդանիների կամ գույքին պատճառված որևէ վնասի համար, որը կարող է առաջանալ սարքի սխալ կամ անպատշաճ օգտագործման, կամ ոչ որակյալ վերանորոգման հետևանքով:

Տեխնիկական բնութագրեր

Մոդել՝	3A-C276F
Լարում՝	220–240 Վ փոփոխական հոսանք
Հաճախականությունը՝	50/60 Հց
Հզորություն՝	1200 Վտ
Անվտանգության դաս՝	Դաս I
Ջրի բաքի ծավալը՝	470 մլ
Մոտավոր քաշը՝	2,551 կգ
Արտադրանքի չափսերը՝	Ե342 x L93 x Բ211 մմ
Հոսանքի լարի երկարությունը	մոտ 1000 մմ
Շահագործական աղմուկ՝	≤60 դԲ /Ա/
Օգտագործված պարկուճների տարայի տարողունակությունը	8-10 պարկուճ
Սպասման ռեժիմում աշխատանքի ժամանակը՝	9 րոպե
Նախնական տաքացման ժամանակը	մոտ 40 վրկ

Սպասարկման ծառայություն

Շնորհակալություն մեր արտադրանքը գնելու համար:
Մեր նպատակն է համոզվել, որ դուք լիովին գոհ լինեք ձեր գնումից: Ձեր մեկնաբանություններն ու առաջարկները կարող եք թողնել ստորև.

Սրճեփ MINI 2.0

Մոդել՝ 3A-C276F